# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

գ. Շիրակամուտ

N<sup></sup>

№ Ե -03/97

«08» 12. 2015թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Ձեզ ենք ներկայացնում Շիրակամուտ համայնքի ավագանու թիվ39-Ա, 40-Ա և 41-Ն որոշումները:

Առդիր 4 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ս.Մազմանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
,,01 '' դեկտեմբերի 2015 թվականի N39-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015Թ.ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով՝ավագանին

Որոշում է

Հաստատել Շիրակամուտ համայնքի 2015թ. դեկտեմբերի 1 -ի նիստի օրակարգը

ՕՐԱԿԱՐԳ

2015թ.ի դեկտեմբերի 1-ի թիվ 13 նիստի

1. Շիրակամուտ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:
2. Շիրակամուտ համայնքի 2015թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/4/ | դեմ /0/ | ձեռնպահ/0/ |
|---|---|---|---|
| Հ. Նալբանդյան | | | |
| Ա.Տ.Պապոյան | | | |
| Ս. Կ.Պապոյան | | | |
| Կ.Սաղաթելյան | | | |
| | | | |
| | | | |

Համայնքի ղեկավար՝ Ս.Մազմանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

### ՈՐՈՇՈՒՄ

,,01 " դեկտեմբերի 2015 թվականի N40-Ա

### ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համայնքի ավագանու 2014 թվականի հոկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Շիրակամուտ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 19-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/4/ | դեմ /0/ | ձեռնպահ/0/ |
|---|---|---|---|
| Հ. Նալբանդյան | | | |
| Ա.Տ.Պապոյան | | | |
| Ս. Կ.Պապոյան | | | |
| Կ.Սաղաթելյան | | | |
| | | | |
| | | | |

Համայնքի ղեկավար՝ Ս.Մազմանյան

Հավելված

ՀՀ Լոռու մարզի

Տիրականոտ համայնքի ավագանու

2015 թվականի դեկտեմբերի 1-ի N40-Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1) Ժամկոչյան Գառնիկ Մինասի - երեսուն հազար դրամ,

2) Համբարյան Տարոն Մանվելի - երեսուն հազար դրամ,

ԸՆԴԱՄԵՆԸ՝ -վաթսուն հազար դրամ:

ՏԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ.ԵՐԱՆՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
,, 01 "դեկտեմբերի 2015թվականի N 41-Ն

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, և հաշվի առնելով Շիրակամուտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին

Որոշում է

Շիրակամուտ համայնքի 2015 բյուջեի

1. 01/01/01 դասակարգման ` 4212 հոդվածից 100,2հազար դրամ, 4823 հոդվածից 2,9հազար դրամ, 4241 հոդվածից 29,1հազար դրամ տեղափոխել 09/05/01 դասակարգման 4511 հոդված` երաժշտական դպրոցի սուբսիդիայի համար:

2. 11/01/02 դասակարգման 4891 հոդվածից 512,0հազ.դրամ և 09/02/02 դասակարգման 4269 հոդվածից 60,0 հազար դրամ տեղափոխել 09/05/01դասակարգման 4511 հոդված ` երաժշտական դպրոցի սուբսիդիայի համար:

3.01/01/01 դասակարգման` 4234 հոդվածից 67,8 հազար դրամ, 4241 հոդվածից 29,2հազար դրամ , 4823 հոդվածից 3,0հազար դրամ տեղափոխել 09/01/01 դասակարգման 4511 հոդված` մանկապարտեզի սուբսիդիայի համար:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/4/ | դեմ /0/ | ձեռնպահ/0/ |
|---|---|---|---|
| Հ. Նալբանդյան | [signature] | | |
| Ա.Տ.Պապոյան | [signature] | | |
| Ս. Կ.Պապոյան | [signature] | | |
| Կ.Սաղաթելյան | [signature] | | |
| | | | |
| | | | |

Համայնքի ղեկավար` [signature, stamp] Ս.Մազմանյան